կան եւ եւրոպացիին միանգամայն անծանօթ մի կեանք:

Արեւելցին վարժւում է խորհել: Նա միջոցներ է փնտռում մասնակցելու համայն տիեզերքին: Ամէն գործունէութիւն պատրանք է: Գերագոյն գիտութիւնը թելադրում է խնամք չտանել նիւթական աշխարհի մասին, չենթարկուել անհատական գիտութեան կանոններին, կազմուած դաշտանկարների պատրանքներին, ապագայի կառուցուածքներին, ժամանակի թուաբանութեան, ժամանակագրական անցեալին: Նրա մէջ իմաստութեան ձայնը ազատօրէն հնչում է, թրթռում մտահայեցողութեան շունչի հետ:

Գործողութիւնը ստորին մշակոյթի նշան է. նա մեզ հեռացնում է իսկական գիտութիւնից, նա մեզ ենթարկում է բնազդին, քան տրրամաբանութեան: Պէտք է հասնել հաւասարակշռութեան եւ ներդաշնակութեան. պէտք է անհատականութիւնը անհետանայ եւ իրերի ու մարդկանց միջեւ միութիւնը առաջ գայ:

Այդ է մօտաւորապէս այն գաղափարը, որ մենք կազմում ենք արեւելեան ոգու մասին:

* * *

Իրականութեան մէջ, այդպիսի յստակ բաժանում արեւելեան եւ արեւմտեան մտայնութիւնների միջեւ գոյութիւն ունի՞: Մարդկային ոգու սահմանները շրջապատուա՞ծ են այդպիսի անանցանելի պարիսպներով:

Ճշմարտութիւնը այն է, որ երկու մտայնութիւններն էլ կարող են միասին գոյութիւն ունենալ: Բաւական է մակերեսային ակնարկ նետել պատմութեան մէջ տեղի ունեցող հոգեկան փոխակերպութիւնների վրայ, այդ մասին համոզում կազմելու համար:

Այստեղ, ուզում եմ սեղմել փիլիսոփայ Շպենգլերի ձեռքը: Ուրա՛խ եմ ծանօթանալ:

Միանգամայն համոզիչ եւ գեղեցիկ պատճառաբանութիւններով նա տարորոշում է մշակոյթը եւ քաղաքակրթութիւնը: Մեր մարդկային առաջընթացութեան ռիթմը, նիւթական աշխարհի դէմ մղած պայքարները, անդունդները եզերող մեր անվստահ քայլը, ընկերութեան բռնակալ ուժը, միայնութեան տենչը դէպի անհունը, մի խօսքով, բոլոր մեր տատանումները, տարակուսանքները եւ բաղձանքները պատմութեան շրջանին՝ նկարուած են յստակօրէն, արձանագրուած եւ դասաւորուած:

Պատմութեան մէջ կան մշակոյթային շրջաններ եւ կան քաղաքակրթական շրջաններ: Փիլիսոփայական ծանր խառնակոյտի մէջ այդ գաղափարը որոշ է եւ լուսաւոր: Ինքը Շպենգլերը ծանրութեան տակ մնում է ճզմուած, գլուխը վայր է գցում, դէմքի կնճիռները ձեռքերի մէջ ծածկում է, կեանքի եւ մահուան նախախնամական հոլովումի առջեւ մնում է անորոշ, ընդունում է անխուսափելին, չի հաւատում պատմական վերադարձին կամ նոյնիսկ այլափոխութեան: Շպենգլերը դժբախտ է եւ պէտք է նրան խղճալ:

Մշակոյթ եւ քաղաքակրթութիւն:

Որոշ դարեշրջաններում մշակոյթը, լուսաւոր շնորհքի նման, ծնունդ է առնում, զարգանում է, փթթում եւ, իր նպատակը իրագործելուց յետոյ, աննշմարելի կերպով անհետանում է:

Ծնւում է, իրագործւում եւ մեռնում:

Նրա բնոյթը ազնուական է եւ որակեալ:

Նա զարգանում է նիւթական եւ ընկերային կեանքից վեր: Նրա նպատակն է ստեղծել նոր հոգեկան արժէքներ, Նրա նուաճումները խորհրդանշանական են եւ ոչ իրական: Մշակոյթը գործնական ոչ մի նպատակ չունի: Նա ամբողջովին անշահադրդռուած է, հեռու ամէն տեսակ կազմակերպութիւններից, որոնց նպատակն է բարելաւել ընկերային կեանքի նիւթական ձգտումները:

Առանձնացած անհատներ բացում են իրենց հոգին դէպի անհունը, աստուածային լոյսի համար ծարաւ պատուհանների նման: Հոգին կենտրոնանում է իր մէջ, թեւեր առնում եւ ճախրում ազատօրէն: Կեանքը ներուժօրէն զարգանում է եւ մինչեւ այն օրը անծանօթ մնացած կարելիութիւններ է բախում:

Ամենափոքր դէմքերը հոգեկան մարդի մէջ բիւրեղեայ պատկերների են վերածւում ու լուսաւորւում:

Ամէն ինչ խորհրդանշան է, ցուցմունք, գերագոյն նպատակ. ամէն ինչ անշահախնդրութիւն է, ճշմարտութեան որոնում եւ ճշմարտութեան իրագործում:

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան